Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2017թ. թիվ 10 նիստում
ԳՊՀ ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«30» սեպտեմբերի 2017թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Սույն կանոնների նպատակն է սահմանել Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան կամ ԳՊՀ) կիրառման ենթակա էթիկայի նորմերը՝ որպես Համալսարանի գործունեության համար կարևոր բարոյական կողմնորոշիչներ:
2. Էթիկայի կանոնները վերաբերում են Համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամներին, ուսանողներին (այսուհետ՝ դերակատարներ) ովքեր այդ կանոնները պարտավոր են կիրառել միմյանց հետ հարաբերություններում, ինչպես նաև Համալսարանի ներքին և արտաքին շահառուների հետ առնչություններում:
3. ԳՊՀ-ում գործող էթիկայի կանոնները ներառում են բարոյական սկզբունքներ, արժեքային կողմնորոշիչներ, որոնք նպաստում են Համալսարանի դերակատարների կողմից իրենց գործառույթների պատշաճ իրականացմանը, պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ԳՊՀ-ի նկատմամբ հանրային վստահության ապահովմանը:
4. Համալսարանում կիրառվող էթիկայի սկզբունքներն են.
   1) բարեվարքություն,
   2) ազնվություն,
   3) ճշմարտախոսություն,
   4) սոցիալական արդարություն, անաչառություն,
   5) ժողովրդավարություն,
   6) թափանցիկություն,
   7) հաշվետվողականություն,
   8) օբյեկտիվություն,
   9) փոխադարձ հարգանք,
   10) փոխադարձ վստահություն,
   11) փոխադարձ ուշադրություն, հոգատարություն,

12) նվիրվածություն,

13) բարեխղճություն

14) պատասխանատվություն:

5. Համալսարանում բոլոր դերակատարները պահպանում են բարեվարքության ընդհանուր նորմերը, սույն կանոնները, ինչպես նաև ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգում և հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում սահմանված դրույթները:
6. Համալսարանում ընդունված էթիկայի կանոն է ազնվությունը, ըստ որի դերակատարները պետք է խուսափեն անազնիվ վարքագծի ցանկացած դրսևորումից՝ խարդախությունից, ստախոսությունից, խաբեությունից, գողությունից, շորթումից, կաշառքի պահանջից, գրագողությունից, արտագրությունից, ակադեմիական ազնվության սկզբունքի այլ խախտումներից:
7. Համալսարանում ցանկացած տիպի հաղորդակցության ընթացքում դերակատարները պահպանում են ճշմարտախոսության սկզբունքները՝ խուսափելով կեղծիքից, ստախոսությունից, փաստերի և իրավիճակների աղավաղումներից:
8. Համալսարանում դերակատարների համար կարևոր էթիկական նորմ է սոցիալական արդարության սկզբունքը, բոլոր հարաբերություններում անաչառության պահպանման պահանջը:
9. Բոլոր ուսանողները և աշխատակիցները հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով: Արտոնյալ կարգավիճակ որևէ ուսանողին կամ աշխատակցին վերապահելը, դերակատարների ոչ իրավահավասար փաստական վիճակ ստեղծելը՝ որպես էթիկայի կանոնների կոպիտ խախտում, արգելվում է:
10. Համալսարանի դերակատարները գործում են ժողովրդավարության կանոններով, յուրաքանչյուրի ազատ խոսքը և կարծիքը հարգելու սկզբունքով:
11. Համալսարանում բոլոր գործընթացներն իրականացվում են թափանցիկության սկզբունքով՝ որպես օրինական և ժողովրդավարական գործունեության պարտադիր պայման:
12. ԳՊՀ-ում գործում են հաշվետվողականության կառուցակարգեր, որոնց միջոցով ապահովվում է Համալսարանի գործունեության մշտադիտարկումը, արդյունքների վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերի վերհանումը, վերլուծությունների կատարումը և բարելավումների իրականացումը:
13. Համալսարանում իրականացվող բոլոր գործընթացները կանոնակարգված են համապատասխան իրավական ակտերով: ԳՊՀ ներքին իրավական ակտերը հրապարակված են և շահառուներին հասանելի՝ կամային և անկանխատեսելի

վարքագծի դրսևորումներից խուսափելու, սուբյեկտիվ որոշումների կայացումը կանխելու նպատակով:

14. Համալսարանում ընդունված են պաշտոնների անձնագրեր՝ համապատասխան գործառույթների նկարագրությամբ: Դրանք հրապարակված են և շահառուներին հասանելի՝ գործառույթների կրկնությունները բացառելու, պարտականություններից խուսափում թույլ չտալու, պաշտոնական դիրքի չարաշահումները և լիազորությունների վերազանցումները կանխելու նպատակով:
15. ԳՊՀ ուսանողների գիտելիքները դասախոսների կողմից գնահատվում են օբյեկտիվության սկզբունքով՝ որպես սոցիալական արդարության ապահովման կարևոր պայման:
16. Համալսարանի բոլոր դերակատարներն առաջնորդվում են փոխադարձ հարգանքի կանոնով՝ զերծ մնալով որևէ մեկի նկատմամբ սպառնալիք, թշնամանք, վիրավորանք դրսևորելուց: Այն ներառում է հարգանքը միմյանց հայացքների, զաղափարների, դիրքորոշումների, ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության և այլ արժեքների նկատմամբ:
17. Համալսարանում դերակատարները պահպանում են փոխադարձ վստահության կանոնը՝ որպես արդյունավետ համագործակցության անհրաժեշտ պայման, աշխատանքի հաջողության գրավական:
18. Համալսարանի դերակատարները պահպանում են փոխադարձ ուշադրության և հոգատարության կանոնները՝ որպես առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի և արդյունավետ թիմային աշխատանքի պարտադիր պայման:
19. ԳՊՀ բոլոր դերակատարները պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել ազնվորեն և անաչառ կերպով, առանց կողմնակալության և վարքի անազնիվ դրսևորումների ապահովել ներգրավվածություն ընդհանուր գործում:
20. ԳՊՀ-ում կարևորվում են դերակատարների բարեխղճությունը և նվիրվածությունը գործին, ազնիվ, օբյեկտիվ և կոռուպցիայից զերծ առաջնորդությունն ու ակտիվ մասնակցությունը ԳՊՀ խնդիրների լուծմանը:
21. Համալսարանի բոլոր դերակատարները պատասխանատվություն են կրում միմյանց, արտաքին շահառուների և հանրության առջև՝ իրենց գործառույթները պատշաճ կատարելու համար:
22. Համալսարանի բոլոր դերակատարները պարտավոր են դրսևորել բարոյական վարվելակերպ՝ միմյանց նկատմամբ վերաբերելով առանց խտրականության՝ կապված անձանց սոցիալական վիճակի, ծագման, զույքային դրության, սեռի, քաղաքական կամ այլ հայացքների, հաշմանդամության, դավանանքի և այլ հանգամանքների հետ:
23. Համալսարանի դերակատարները պարտավորվում են ձեռնպահ մնալ որևէ հանձնարարություն և խնդրանք կատարելուց, որոնք չեն բխում օրենքից, Համալսարանի կանոնադրությունից և դեմ են ԳՊՀ շահին:

24. Համալսարանի որևէ մարմնում հարց քննարկելիս, որը վերաբերում է ԳՊՀ աշխատակազմի անդամների անձնական շահին կամ նրա մերձավոր ազգականի շահին, տվյալ անդամը պարտավոր է հրաժարվել հարցի քննարկմանը մասնակցելուց:
25. Համալսարանի դերակատարներն իրավունք չունեն պահանջել կամ ընդունել կաշառք, կամ նյութական ծառայություն, քաղել որևէ անձնական օգուտ՝ իրենց ծառայողական պարտականությունների կատարման կամ այդ պարտականությունների կատարումից ձեռնպահ մնալու դիմաց:
26. Համալսարանի դերակատարները պարտավոր են անմիջապես հայտնել ԳՊՀ ռեկտորին կամ համապատասխան մարմիններին կաշառք առաջարկելու ցանկացած փորձի մասին:
27. ԳՊՀ ֆինանսական կառավարումը, գնման և այլ տնտեսական գործընթացներն իրականացվում են արդարության, ազնվության, թափանցիկության սկզբունքներով:
28. Համալսարանի դերակատարները պարտավոր են խնայողաբար վերաբերել ԳՊՀ գույքին, նյութական ռեսուրսներին և դրանք չօգտագործել անձնական նպատակների կամ շահ ստանալու համար:
29. Համալսարանի էթիկայի կանոնները, ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի պահանջները և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի դրույթները խախտած անձինք սահմանված կարգով ենթարկվում են կարգապահական և վարչական պատասխանատվության:
30. Էթիկայի կանոնների խախտման հետ կապված գործերը քննում է Համալսարանի ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովը՝ ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգում սահմանված կարգով: